



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱԲԼԵՄՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ
ԳՐԱՍԵՆՑԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021, ՀՀ, Վանաձոր Տիգրան
Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, RA
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2020- 28.12/722
28.12.2020 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Գնել Սանոսյանին

Հարգելի՛ պարոն մարզպետ,

Հիմք ընդունելով Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և Ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի նիստի N 20 արձանագրային որոշումը և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ծրագրի կատարումն ապահովող ներքոնշյալ միջոցառումների իրականացման մասին՝ 2017-2020 թթ. ժամանակահատվածի համար:

5. Տարեցների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ըստ նրանց գնահատված կարիքների

- Արդյո՞ք գնահատվել են տարեց անձանց կարիքները, եթե այո՝ երբ, որ համայնքներում, ում կողմից
- Արդյո՞ք ըստ գնահատված կարիքների տրամադրվել է կոմունալ-կենցաղային աջակցություն, եթե այո՝ մասնավորապես ինչ աջակցություն է ցուցաբերվել, որ համայնքներում և քանի տարեցի (խնդրում եմ տրամադրել յուրաքանչյուր համայնքում աջակցություն ցուցաբերված անձանց թիվը և աջակցության տեսակը)

10. Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական մեխանիզմների մշակում և ՀՀ-ում գործող պետական և հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում

- Արդյո՞ք հստակեցվել և կանոնակարգվել է խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման գործընթացը, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել համապատասխան իրավական ակտի/երի հղումը կամ պատճենը
- Արդյո՞ք քարտեզագրվել են տարեց անձանց մատուցվող ծառայությունները, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել քարտեզագրման արդյունքները
- Արդյո՞ք քարտեզագրման արդյունքում ներկայացվել են առաջարկություններ պահանջարկ ունեցող, սակայն տարեցներին չմատուցվող ծառայությունների տրամադրման վերաբերյալ, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը

19. Տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում

- Արդյո՞ք թատերահամերգային կազմակերպությունները, թանգարանները և գրադարաններն իրականացրել են տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ, եթե այո՝ մասնավորապես որ թատերահամերգային կազմակերպությունները, թանգարաններն ու գրադարանները, երբ, քանի և ինչ խորագրով միջոցառումներ են իրականացրել (առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել միջոցառումների վերաբերյալ հղումներ)

20. Տարեցների ներուժի օգտագործում՝ ժողովրդական արհեստների փոխանցում երիտասարդ սերնդին

- Արդյո՞ք մարզում տարեցների ստեղծագործ ներուժի օգտագործման միջոցով մշակույթի տներում կամ դպրոցներում ստեղծվել են տարբեր խմբակներ, եթե այո՝ որ համայնքներում, երբ, քանի խմբակ է ստեղծվել, քանի տարեց և քանի աշակերտ կամ երիտասարդ է ներգրավվել

21. Ավագ սերնդի վաստակի գնահատում, միջսերնդային կապերի ամրապնդում, համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովում

- Արդյո՞ք անց են կացվել մեծարման երեկոներ՝ նվիրված պատերազմի վետերաններին, վաստակաշատ տարեց մարդկանց, եթե այո՝ քանի երեկո, երբ է անցկացվել, որ համայնքներում և քանի սովորող է ներգրավվել, որ ուսումնական հաստատությունից
- Արդյո՞ք տարեցները մասնակցել են համայնքային կյանքին վերաբերող որոշումների կայացմանը, եթե այո՝ որ համայնքների ավագանիներին կից ավագների խորհուրդներ են ստեղծվել, երբ, քանի տարեց է ներգրավվել

խորհրդում, ինչ սկզբունքով են նրանք ներգրավվել, ինչ որոշումներ են կայացվել վերջիններիս ներգրավմամբ

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե վերը նշված գործողությունների իրականացման համար որքա՞ն ֆինանսական ռեսուրսներ են պահանջվել և ծախսվել, ինչ աղբյուրներից են ֆինանսական միջոցները ներդրվել (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ յուրաքանչյուր գործողության, որի համար ֆինանսական միջոցներ են հատկացվել):

Հարգանքով՝

կազմակերպության նախագահ

Կատ.՝ Մ.Թեմուրյան

mtemuryan@hcav.am

077342268

